

Մայիսի 19-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանն անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն



Մայիսի 19-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանն անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ. Ալեքսանյանի, կրթության բաժնի պետ Հ. Հարությունյանի և Կապանի տարածաշրջանի դպրոցների տնօրենների հետ: Քննարկվեցին 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննություններին, ներդպրոցական վերահսկողությանը, ուսուցիչների տարակարգ ստանալուն վերաբերող հարցեր: Բուռն քննարկման առարկա դարձավ Վերջին դասին նվիրված տոնական օրվա ճիշտ



կազմակերպումն ու ընթացքը: Դպրոցի տնօրեններին հանձնարարվեց ունենալ միջոցառումների հստակ պլան և ժամանակացույց:

